

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ «ԵՐԿՈՒ ՏՈՂ» ՊԱՄՖԼԵՏԸ

Բանալի բառեր. Միքայել Նալբանդյան, «Հրաշափառ խայտառակություն», «Երկու տող», պամֆլետ, հրապարակախոսություն, Հովհաննես Տերոյենց, «Երևակ», «Հյուսիսափայլ», Հարություն Սրվաճյան, «Մեղու», Գաբրիել Այվազովսկի:

Ключевые слова: Микаел Налбандян, «Славный позор», «Две строки», памфлет, публицистика, Ованес Тероенц, «Еревак», «Юсисапайл», Арутюн Свачян, «Мегу», Габриел Айвазовский.

Key words: Mikael Nalbandian, “Glorious Shame”, “Two Lines”, pamphlet, publicism, Hovhannes Teroents, “Yerevak” (“Vision”), “Hyusisapayl” (“Northern Lights”), Harutyun Svatchyan, “Meghu” (“The Bee”), Gabriel Ayvazovski.

Պամֆլետի ժանրային նախօրինակները երևան են եկել դեռևս անտիկ՝ հունա-հռոմեական գրականության մեջ՝ որպես միջնադարյան սխոլաստիկայի, իշխանավորների, հետամնաց հոգևորականության, կենցաղում և հանրային-քաղաքական կյանքում տեղ գտած արատավոր երևույթների դեմ ուղղված մերկացումներ: Այդ շրջանի երգիծաբաններն ընտրում էին պամֆլետի մերթ նամակագրական, մերթ պարոդիական, մերթ էլ դիմանկարային ձևերը: Նոր շրջանում պամֆլետը ձեռք է բերում քարոզչական բնույթ՝ արտահայտվելով, այսպես կոչված, «թռչող թերթիկի» (‘palmefeuille’) տեսքով՝ պամֆլետ-դիմում, պամֆլետ-կոչ, պամֆլետ-հոդված... Հետագայում այն արդեն հանդես է գալիս դասական թերթոնային հոդվածների ձևով: Տեսական զարգացման ճանապարհին պամֆլետն աստիճանաբար հարստանում է, ձեռք բերում զանազան յուրահատկություններ, նաև միջժանրային հատկանիշներ:

Հայ գրականության մեջ պամֆլետի դասական առաջին օրինակները միանշանակորեն կապվում են Միքայել Նալբանդյանի (1829-1866) անվան հետ, մի բարձր մտավորականի, որի բազմաբնույթ ու բազմաժանր ստեղծագործության մեջ առանձնանում է «Երկու տող» նշանավոր պամֆլետը: Այն առանձին գրքուկով առաջին անգամ լույս է տեսել 1861-ի գարնանը Փարիզում: Ծրագրային այդ աշխատության մեջ Միք. Նալբանդյանը մերկացնում է իր գաղափարական հակառակորդներին՝ Հովհաննես Տերոյենցին և Գաբրիել Այվազովսկուն՝ պաշտպանելով «Հյուսիսափայլ» ամսագրի ու «Մեղու» պարբերականի առաջադիմական ուղղությունը: Պամֆլետը գրելու շարժառիթը Հովհ. Տերոյենցի՝ «Երևակ» ամսագրում

տպագրված հոդվածն էր՝ ուղղված Միք. Նալբանդյանի և Հարություն Սըվադյանի դեմ: «Հին խելքերից» մեկի Հովհ. Տերոյենցի այդ «անամոթ վատության» մասին ահա ինչ է գրում Միք. Նալբանդյանը «Երկու տող»-ում. «Սկզբունքների համար մեզ տրված սոցիալիստ, կարմիր հասարակապետական, Ժ. Ժ. Ռուսսոյի դրությունքը ընդունող, և այլն, և այլն և այլն ածականների վերա միօրինակ ժպտում ենք և շտապում ենք հայտնել, որ չենք ընդունում ոչինչ հեղինակություն (autorité) և մեր ամբաստանված նամակի մեջ և ոչ մի անգամ մի բառ կա Ժ. Ժ. Ռուսսոյից: Բայց թե երկու անգամ երկուքը չորս է ինչպես Ժ. Ժ. Ռուսսոյի համար, նույնպես և իմ համար, այդպիսի դիպվածում Ժ. Ժ. Ռուսսոյի դրության հետևող չեղանք, այլ ճշմարտության, իսկ ճշմարտությունը մի մարդու սեփականություն չէ, թեև պ. Չամուռճյանը այդ մասին ևս հայտնե յուր երեխայամիտ, անդատաստան պահանջողությունքը»¹:

Ինչպես վկայում է կենսագիրը՝ Հովհաննես Մրմրյանը, Հովհաննես Տեր-Կարապետյան Տերոյենց Չամուռճյան Պրուսացի բազմանուն Պատվելին «տիրած էր 10-15 լեզուներու, լափած էր հազարներով գիրք, գրած էր հարյուրներով ալ. կը մաքառեր ու կը հաղթեր հռոմեական ու բողոքական աստվածաբաններու և հրեա ռաբբիներու. ուներ նաև սոսկալի՝ բան՝ դներու գիտությունը, վարժապետած էր կաթողիկոսներու և, խայթիչ գրողի մը (Հ. Սըվադյանի- Լ. Խ.) խոսքով, ինք անվեղար կաթողիկոսն իսկ էր ազգին...»²: Նա, պատկանելով լուսավորչական համայնքին ու ներկայանալով առաքելական եկեղեցու պաշտպան, հաճախ էր դառնում պապականության ջատագով՝ գտնելով, որ կաթողիկոսության ու լուսավորչականության միջև եղած տարբերությունները սոսկ ծիսական են ու բառային, իսկ Պապին հռչակում էր քրիստոնեական եկեղեցու ընդհանրական գլուխը: Այդ հանգամանքը նկատել են ժամանակակիցները, դրա դեմ երգիծանքի սլաքներ են ուղղել Միք. Նալբանդյանն ու Հակոբ Պարոնյանը, իսկ Հ. Սըվադյանի «Մեղու»-ի ընթերցողները Հովհ. Տերոյենցին անվանել են ճիզվիտական օրդենի հիմնադիր-գեներալ Իգնատիոս Լոյոլայի «հայ թոռնիկը», «Լոյոլայի հոգեհարազատ Չամուռճին»³: Կրոնական մոլի միստիցիզմով վարակված այդ հետադեմ գործիչն իր հրատարակած պարբերականներում («Հայաստան», «Զոհալ», «Երևակ») անգուսպ եռանդով պաշտպանում էր

¹ Միք. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 4, Երևան, 1983, էջ 11:

² Մրմրյան Հ. Գ., Տասնիններորդ դար և Հովհ. Պրուսացի Տերոյենց, Կ. Պոլիս, 1908, էջ 14:

³ Տե՛ս «Մեղու», 1864, թ. 232, 22 փետրվարի, թ. 239, 29 ապրիլի:

մայրամուտ ապրող ամիրայությանը, դիմակայում ազգային զարթոնքին ու ժողովրդի սոցիալ-քաղաքական պահանջներին: Բազմաթիվ են հատկապես «Երևակ»-ի էջերում տպագրվող այն հոդվածները, որոնց մեջ պատմվում են զանազան դևերի գոյության, նրանց չարության մասին, այն «անմարմին գոյացությունների» գոյության, որոնք «աշխարհիս մեջ պատահած գործերուն ալ կը խառնվին»: «Դև չը կա ըսելը Տեառն մերո մարմին առնելուն և փրկարար խաչելությանը պատճառը վերցնել է,- գրում է Պատվելին,- և պատճառը վերնա նե՝ գործն ալ կը վերնա. մեկ մարդ մը որ միտքը հաստատությամբ դրած ըլլա որ դև չկա, և բնական տրամաբանության ձիրք ալ ունենա, հետևութենէ հետևություն մինչև Տեառն մերո մարդեղությունը, խաչելությունը և հարությունը ուրանալու կը հասնի»⁴:

1860-ին Կ. Պոլիս ժամանած Միք. Նալբանդյանի ուշադրությունից չէր կարող վրիպել պոլսահայ ամիրաների և հետադեմ հոգևորականության այդ գաղափարախոսը: Նա Չամուռճյանի դեմ սկսում է հայտնի բանավեճը՝ նախ «Հրաշափառ խայտառակություն» պամֆլետով⁵, ապա շարունակում նշանավոր «Երկու տող»-ում: Կարդալով «անվեղար կաթողիկոսի» «Ապացույցք ավետարանական պատմության» հոդվածը, ուր հեղինակը հավատացնում էր, թե ժխտել դևերի գոյությունը, նշանակում է մերժել նաև քրիստոնեական կրոնը, Միք. Նալբանդյանը «Հրաշափառ խայտառակություն» պամֆլետում պատասխանում է, որ լուսավորյալ ժամանակներում Չամուռճյանի քարոզած միջնադարյան սխալաստիկան «հոգեկան հիվանդության» արտահայտություն է. «Որպես հայ, ամոթահար զայրանում ենք, որ այս ժամանակում հայ մամուլից արձակվում են այսպիսի ցնորաբանությունք: Մինչև ե՞րբ պիտի խայտառակվին և յուրյանց հետ պիտի խայտառակեն հայ մամուլը, մեր այս դևընկալ իմաստունքը. կարծենք թե ժամանակ էր արդեն սթափելու միջին դարերի արբեցութենից»⁶:

Եվ ահա սույն գործչի նկատմամբ իր վերաբերմունքը Միք. Նալբանդյանը շատ ավելի խստացնում է «Երկու տող» պամֆլետում՝ հայ հրապարակագրության փայլատակումներից մեկում: Հրապարակախոսը սթափորեն ցույց է տալիս, որ Տերոյենցը «յուր փտած ու վաճառված գրիչով» ձգտում է պատնեշ կանգնեցնել նոր՝ լուսավորյալ ուժերի դեմ, պաշտպանում է միջնադարյան խավարամտությունը և «գտանվելով երկրագունդի

⁴ «Երևակ», Կ. Պոլիս, 1861, թ. 113, էջ 140-141:

⁵ «Մեղու», Կ. Պոլիս, 1860, թ. 118:

⁶ Միք. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 3, Երևան, 1982, էջ 265:

վերա՝ ապրում է շատ հեռի նորա մակերևույթից»⁷: Միք. Նալբանդյանը բավական համոզիչ ցույց է տալիս, թե ժողովրդին ինչպիսի թշվառություններ են բերում տգիտությունը, սնոտիապաշտությունը, թե ինչպիսի բացասական դեր կարող է կատարել հոգևորականության հետամնաց հատվածը: Այդ առիթով *պամֆլետի ժանրին են միախառնվում զանազան քաղվածքներ, նամակներ, վավերական հիշատակություններ, խոսուն երկխոսություններ, որոնք մի կողմից ուժեղացնում են նկարագրությունների հավաստիությունը, մյուս կողմից՝ հարստացնում պամֆլետը՝ հարակից ժանրերի ինքնատիպ ներհյուսումներով:*

Ահա բնորոշ մի քանի օրինակներ: Պատմելով Մովսես Խորենացու (նրա «տգիտահալած մատյանները **փաթաղիկես** (եղծված, մոլորված.- Լ. Խ.) անունով հոչակեցին») և Ղազար Փարպեցու (նրան «ոտքը բոբիկ քշեցին վանքից» և **«աղանդավոր** հոչակեցին») մասին՝ հրապարակագիրը բերում է վերջինիս «Թղթից...» կղերականությանը բնութագրող ազդեցիկ տողեր. «Առ դառնաշունչ նախանձու իւրեանց, որ բունեալ է ի նոսա... Պատատեալ և քո-դարկեալ երեսօք նստին, որպէս առ հոտեալ դիական, պապանձեալ իբրև զհամր դև»⁸: Կամ՝ ամբողջովին մեջ է բերում Գաբրիել Այվազովսկու վեց նամակների պատճենները (դրանք Միք. Նալբանդյանն ստացել էր Ս. Ղազար կղզու աբբահոր՝ Գևորգ Հյուրմյուզի եղբորից՝ արքեպիսկոպոս Էդուարդ Հյուրմյուզից), որոնք բնութագրում են նրա քսու և ծախսու գործունեությունը⁹: Միք. Նալբանդյանը երգիծում է Գաբրիել Այվազովսկուն, ոչնչացնող քննադատության ենթարկում նրա աշխատությունները («Պատմութիւն Օսմանեան պետութեան», «Վարդապետարան»): Կամ էլ պամֆլետի ժանր է հանկարծ «ներխուժում» դրամատիկական երկերին այնքան հատուկ երկխոսության հատվածը՝ «Երկու տող»-ը երբեմն կարծես դարձնելով *պամֆլետ-կատակերգություն*.

«- Պ. Այվազովսքին **Օսմանյան պատմության** մեջ հայոց ազգը հերձվածող է կանչում:

- Այդտեղ նա մեղավոր չէ. առանց նորա կամքին, վանքը հավելացուցել է այդ էջերը:

- Պ. Այվազովսքին ինչի՞ համար ընդունեց:

- Ո՛վ է այդ հարցանողը:

(Պ. Այվազովսքին պատասխանում է) – Մի հերետիկոս:

⁷ Տե՛ս **Միք. Նալբանդյան**, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 4, էջ 17:

⁸ Նույն տեղում, էջ 23:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 27-30:

- Քրիստոնեական հավատո **Վարդապետարանի** մեջ, պ. Այվազովսքին հակառակում է բուն հայոց եկեղեցու վարդապետության:

- Տպագրության սխալանք են. գրաշարը շարադրել է այն բոլոր կտորները:

- Ո՛չ, պարոն, հեղինակի ձեռագիրը, որ կա տպարանի մեջ, վկայում է, թե գրաշարը և ոչ անգամ մի տառ փոխած է. ուստի տպագրության վերա հանցանք դնելը գրապարտություն է:

- Ո՛վ է այդ հետախույզը:

(Պ. Այվազովսքին պատասխանում է) – Մի անհավատ...»¹⁰:

Ազատություն միջնադարյան կրոնական մղձավանջից, դաժանությունից ու խոր տգիտությունից. ահա «Երկու տող»-ի հիմնական տարերքը, որն իր մարմնավորումն է ստացել պամֆլետի երկու բնաբաններում՝ մեկը՝ անգլիացի ուտոպիստ-սոցիալիստ փիլիսոփա Ռոբերտ Օուենի (1771-1858) դիպուկ խոսքով («Ճշմարտությունը կրոն է, նորան միայն խնդրեցեք, իսկ նորանից ոչինչ»), մյուսը՝ սեփական «Ազատություն» բանաստեղծության բնորոշ քառատողով («Ազատությո՛ւն, գոչեցի թո՛ղ որոտա իմ գլխին...»)¹¹:

Ուշագրավն այն է, որ «Երկու տող»-ի կրքոտ հրապարախոսությանն ու անողորմ երկացումներին գրեթե անտեսանելի միահյուսվում են «Մանկության օրեր»-ի հեղինակի *քնարական ջերմ գեղումները*: Ահա դրանցից մեկը. «Եղո՛ւկ ձեզ, Հայաստանի սարեր, Հայաստանի ձորեր և Հայաստանի նվիրակա՛ն անտառներ: Այրարատից մինչև Տորոս, ստիպված եք դուք հնչեցնել միայն հեկեկանքը և հոնդյունքը Հայաստանի որբ գավախների, հարստահարողների և եկեղեցականների գավազանի տակից»¹²:

Ինչպես տեսնում ենք, նալբանդյանական պամֆլետի ժանրային պոետիկա են թափանցում հարակից ժանրերի բազմաթիվ հարստացուցիչներ, որոնք «Երկու տող»-ը դարձնում են հայ հրապարակագրության ամենափայլուն օրինակներից մեկը:

Լ. Խաչատրյան

Միքայել Նալբանդյանի «Երկու տող» պամֆլետը

Ամփոփում

Հոգվածը նվիրված է Միքայել Նալբանդյանի «Երկու տող» նշանավոր պամֆլետի քննությանը: Մասնավորապես նկատվել է, որ այն ոչ միայն հայ

¹⁰ Նույն տեղում, էջ 32:

¹¹ Նույն տեղում, էջ 8:

¹² Նույն տեղում, էջ 25-26:

գրականության մեջ պամֆլետի դասական առաջին օրինակներից մեկն է, այլև միջժանրային փոխակերպումների բավական ուշագրավ մի ստեղծագործություն, ուր պամֆլետի ժանրին են միախառնվում զանազան քաղվածքներ, նամակներ, վավերական հիշատակություններ, խոսույն երկխոսություններ, որոնք մի կողմից ուժեղացնում են նկարագրությունների հավաստիությունը, մյուս կողմից՝ հարստացնում պամֆլետը՝ հարակից ժանրերի ինքնատիպ ներհյուսումներով:

Л. Хачатрян

Памфлет «Две строки» Микаела Налбандяна

Резюме

Статья посвящена анализу известного памфлета «Две строки» Микаела Налбандяна. В частности, отмечается, что указанное произведение является не только одним из первых образцов классического памфлета в армянской литературе, но также довольно примечательным произведением межжанровой трансформации, в котором наблюдается переплетение жанра памфлета с различными выписками, письмами, документальными упоминаниями, живыми диалогами, которые, с одной стороны, усиливают достоверность описаний, с другой – обогащают памфлет своеобразным переплетением смежных жанров.

L. Khachatryan

Mikael Nalbandian's Pamphlet "Two Lines"

Summary

The article is dedicated to the analysis of Mikael Nalbandian's famous pamphlet "Two Lines". It particularly notes, that this is not only one of the first examples of pamphlet in Armenian literature, but is also a rather interesting sample of midgenre transformation in which the genre of pamphlet is intertwined with various extracts, letters, documentary memoirs, expressive dialogues, which, on one hand, strengthen the preciseness of descriptions, and, on the other hand, are enriching the pamphlet with peculiar entwines of adjacent genres.